ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N-145-Ա
« 12 » ԱՊՐԻԼԻ 2024Թ

ՄԱՅԻՍ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2335 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ և 7-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Մայիս Նազարյանին 2024 թվականի ապրիլի 15-ին գործուղել ք. Երևան, ՀՀ ներքին գործերի նախարարություն «Ճգնաժամային կառավարման ակադեմիա» 2024թ. ուս. տարում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Մայիս Նազարյանի գործուղման հետ կապված ծախսերը (օրապահիկ և ճանապարհածախս) կատարել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի ֆինանսական միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափով և կարգով:
3. Մայիս Նազարյանին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել հաշվետվություն՝ գործուղման հետ կապված ծախսերի և գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր